ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» նոյեմբերի 2026 թվականի N: 495 - Ա ք. Գյումրի

ԱՍՏՂԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 1.8-րդ կետի «ե» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Աստղիկ Մարգարյանի 2026 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Մեծ Մանթաշի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աստղիկ Մարգարյանին տրամադրել 20 աշխատանքային օր ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 2026 թվականի նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 11-ը ներառյալ:

2. Աստղիկ Մարգարյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Մեծ Մանթաշի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ընտանեկան բժիշկ Աիդա Չախոյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է